

Հաստատում եմ

22 Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի

Տնօրեն Ս. Հովսեփյան

16

10

2023 թ



Դասուղեկի պլաներ բերում է
Դասուղեկի դպրոցի կանոնադրույթներ
ու պաշտոնաթղթեր նկարագրով
սահմանափակ գործառնություններ
և չպրոցի ուսումնառության շահակ
ընտրությունի՝ միջև թիվ
ընտրության՝ թիվ 9. Վանաձոր

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի

Վանաձոր

մարզ

համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

IV ա

դասարանը

Հռիփսիմե Արամի Պողոսյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1. Վերստուգել կամ կազմել աշակերտների անվանացանկը
2. Վերստուգել կամ կազմել դասարանի սոցիալական անձնագիրը
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1. Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները
2. Հետևել կարգապահությանը
3. Հետևել հերթապահությանը դասարանում

Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր
2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրուստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը
3. Վերահսկել դասարանի սովորողների մասնակցությունը խմբակներում և երկարօրյա խմբերում:
4. Դուրս բերել սովորողների բացակայությունները և բութագրիչ գնահատականները:
5. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կրկնառել դաստիարակչական աշխատանքում
6. Դուրս բերել նույն առարկայից 3 և ավելի անբավարար գնահատական ստացած սովորողների անունները:
7. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում, համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց – հոգեբան կապի միջոցով:

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասավարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկոտում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

- 2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատում պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.
- 3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.
- 4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
- 5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.
- 6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.
- 7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

**ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿԶՍԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)** – IV^ա դասարանում սովորում են 31 աշակերտ, որից 5 աղջիկ և 26 տղա: Աշակերտները ապահովված են դասագրքերով: Բոլորը դպրոց են հաճախում սիրով, պատրաստ, սակայն կան նաև դժվարացողներ: Անհատական աշխատանք է կատարվում ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Դասերին ակտիվություն են ցուցաբերում բոլորը: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Դասարանի սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Աշակերտական կոլեկտիվը համերաշխ է:
2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:** Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից թերացող աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :
3. **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** – Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Ծանոթացնել Հայաստանի հերոսներին և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը: Որոշ տեղեկություն հայտնել պատմության և ազատագրական պայքարների մասին: Ծանոթացնել հայ ազատամարտիկներին, խորհրդանիշներին, երկուշաբթի օրերին դասն սկսել օրհներգով:
4. **Ֆիզիկական դաստիարակություն** – Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվություն : Զրույցներ անցկացնել սպորտի կարևորության և առողջ ապրելակերպի մասին: Տեղեկություններ հաղորդել օլիմպիական խաղերի, հայ մարզիկների մասնակցության և նրանց հաջողությունների մասին:
5. **Աշխատանքային դաստիարակություն** – Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Դասարանում սահմանել հերթապահություն, հետևել դասասենյակի մաքրությանը: Տնային գործերում օգնել ծնողներին, հավաքեն իրենց իրերը և աշակերտական անկյունը:
6. **Հոգևոր դաստիարակություն** – Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ուսուցանել Տերունական աղոթքը: Ծանոթացնել հայ առաքելական եկեղեցական տոներին՝ Խաչվերաց, Սուրբ Զատիկ, Վարդավառ, Տիար ընդառաջ: Աշակերտների հետ այցելել եկեղեցիներ, սովորեցնել , թե ինչպես պետք է իրենց այնտեղ պահեն:
7. **Գեղագիտական դաստիարակություն** – Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքները այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Գեղագիտական դաստիարակության շրջանակներում օգտագործել ԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտալ տոմսերը՝ այց կազմակերպել թատրոն, թանգարան , պատկերասրահ:

8. **Բնապահպանական դաստիարակություն** – Զրույցների և էքսկուրսիաների միջոցով երեխաներին ծանոթացնել բնությանն ու շրջակա միջավային: Մասնակցել կազմակերպվող շաբաթօրյակներին և ծառատունկին : Օգնել <<թևավոր>> բարեկամներին, հատկապես՝ ձմռանը:
9. **Ղպրոց – ընտանիք կապը** – Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն ղպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ**

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
I շաբաթ	Ծանոթություն: Նոր ուստարվա անելիքների ծրագրում	դասվար աշակերտներ	
	Դասագրքերի բաշխում: Ծանոթություն ուսուցչական կազմին, 1-րդ հերթափոխով աշխատելու կարգին, օրվա ռեժիմին, Զրույց ծովակալ Իսակովի մասին:		
Տարվա ընթ.	Ժամանակ առ ժամանակ ստուգել սովորողների սանիտարա- հիգիենիկ վիճակը, գրուցել առողջ ապրելակերպի մասին, <<Ինչով սնվել>>,<<Ինչպես սնվել>>,<<Ինչպես խուսափել վարակիչ հիվանդություններից >>:	բուժքույր դասվար	
II շաբաթ	Դասարանի ավագի, ծնողական խորհրդի կազմի ընտրություն, հերթապահության, դասացուցակի ձևավորում, դասարանական անկյան ստեղծում:	դասվար	
III շաբաթ	Հիշել սովորողի իրավունքներն ու պարտականությունները, վարքի կանոնները, անվտանգ երթևեկության կանոնները:	դասվար	
IV շաբաթ	Անկախության անգնահատելի դերն ինձ համար: Դատելի ժամ նվիրված ՀՀ անկախությանը: Խոսել խորհրդանիշերի մասին:	դասվար աշակերտներ	
V շաբաթ	Զրույց<<Մեր դասարանը>>, <<Իմ ընկերները>>,<<Մենք ըն- տանիք ենք>>թեմայով, բացատրել տղաների և աղջիկների վարքագծերի առանձնահատկությունների մասին:	դասվար	
VI շաբաթ	Տեղեկացնել ուսուցչի տոնի մասին:	դասվար	
VII շաբաթ	Զրույց նվիրված Վանաձորի օրվան: Ներկայացնել Վանաձորի պատմությունը, ներկայացնել նշանավոր մարդկանց :	դասվար	
VIII շաբաթ	Զրույց կազմակերպել <<Ոսկե աշուն>>թեմայով: Զբոսանք մոտակա այգի:	դասվար	
IX- X շաբաթ	Սովորել ճանապարհային երթևեկության կանոնները:	դասվար	

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
--------	----------------------------	---------	----------

XI շաբաթ	Զրույց հեռուստացույցի ,մանկական հաղորդաշարերի մասին, բակային խաղերի , խմբակների, գեղարվեստական, երաժշտական կամ սպորտային դպրոցներ հաճախելու մասին:	դասվար	
XII շաբաթ	Մշտապես հետևել դասարանի և շրջապատի մաքրությանը պահպանել համաճարակային անվտանգության կանոնները:	դասվար	
X III շաբաթ	Զրույց՝ «Լինել հանդուրժող »	դասվար	
XIV շաբաթ	Զրույց՝ <<Ես եմ վաղվա քաղաքացին >>	դասվար	
XV շաբաթ	Զրույց՝ <<Ինչպես պաշտպանվել բնական աղետներից>>	դասվար	
XVI շաբաթ	Զրույց՝ << Մեր թևավոր բարեկամները >>	դասվար	
XVII շաբաթ	ՊատրաստվելՆոր տարվա և Սուրբ Ծննդի տոներին: Այցելել մշակութային վայրեր, ներկայացումներ	դասվար	
XVIII շաբաթ	Հայոց բանակի տոնի կապակցությամբ զրույց կազմակերպել, նախկին և մերօրյա ազատամարտիկների ու հերոսների մասին:	Դասվար գինդեկ	
XIX	Զրույց՝ <<Խաղաղ մանկություն>>	դասվար	
XX	Զրույց՝ առաջադիմության մասին	դասվար	
XXI շաբաթ	Գիրքն վիրելու առիթով զրուցել Հովհաննես Թումանյանի մասին, ներկայացնել նրա հեքիաթները, պահպանել գիրքնվիրելու ավանդույթը: Զարգացնել ընթերցասիրություն,սեր կրթության և գիտության հանդեպ:	դասվար	
XXII շաբաթ	Թարմացնել դասարանական անկյան նյութերը, մշտական	դասվար	
	Հսկողություն սահմանել դասագրքերի,դպրոցական պարագաների նկատմամբ:		
XXIII շաբաթ	Նախապատրաստվել մայրերի տոնին:	դասվար	
XXIV շաբաթ	Ծանոթացնել առաքելական եկեղեցական տոներին, պատրաստվել Սուրբ Զատիկին:	դասվար	
XXV շաբաթ XXVI	Հիշեցնել ճանապարհային երթևեկության կանոնները:		
XXVII շաբաթ	Ապրիլի 7	դասվար	
XXVIII շաբաթ	Զրուցել 1915թ.եղեռնի մասին:	դասվար	
XXIX շաբաթ	Զրույց մայիսի 1-ի,աշխատանքի օրվա շուրջ:	դասվար	
XXX շաբաթ	Զրույց հաղթանակների և խաղաղության մասին:	դասվար	
XXXI արաթ	Ամառային արձակուրդների հանձնարարություններ	դասվար	
XXXII շաբաթ	Ամփոփել տարվա ընթացքում սովորածը	դասվար	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը,ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախաստություն, գրույցներ,քննարկումներ և այլն) թեման	Անցկացման վայրը	Պատասխանատու
01.09	Զրույց-քննարկում «Դու իմ դպրոց »:		դասվար
08.09	Զրույց ծովակալ Իսակովի մասին		դասվար
15.09	Զրույց « Ես էլ քեզ նման եմ» թեմայով		դասվար
22.09	Զրույց «Անկախության 30 ամյակը»		դասվար զինդեկ
29.09	Զրույց«Ուսուցիչ իմ թանկագին»		դասվար
06.10	Զրույց «Վանաձոր՝ իմ գեղեցիկ քաղաք»		դասվար
13.10	Զրույց-քննարկում«Մեր դպրոցի ճանապարհը և երթուղիները»		դասվար
20.10	Զրույց«Առողջ ապրելակերպի կանոնները»		դասվար
03.11	Զրույց <<Եթե ես լինեի...» թեմայով քննարկում		դասվար
10.11	Զրույց « Մենք բնության մի մասնիկն ենք »	Այգի	դասվար
17.11	Կոնֆլիկտի հաղթահարում՝ արի հաշտվենք		դասվար
24.11	Զրույց «Անձնական հիգիենա»		դասվար
01.12	Զրույց«Պոլիթեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը»		դասվար
08.12	Զրույց«Երկրաշարժի զոհերի հիշատակի օր» .Բնական աղետներ, ի՞նչ է երկրաշարժը: .Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետներ:		դասվար
15.12	Զրույց-ննարկում«Լրատվամիջոցներ և կերպարներ »		դասվար
22.12	Զրույց «Կախարդական ձմեռ»	Այգի	դասվար
12.01	Զրույց-քննարկում «Խաղաղ մանկություն»		դասվար
19.01	Զրույց «Հայկական բանակ»		դասվար
26.02	Զրույց «Առաջադիմության մասին»		դասվար
02.02	Զրույց «Մեր հայ հանճարները: Հ. Թումանյան»	Համակարգչայի և սեյնյակ	դասվար
09.02	Զրույց «Գիրքը իմ լավագույն ընկերն է»		դասվար
16.02	«Աշխատակից ենք փնտրում»: Սովորողները կհասկանան թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ, այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարող են բոլոր մասնագիտությունները: Քննարկում, գործնական աշխատանք		դասվար
23.02	Զրույց «Ասացվածքի ամբիոն »		դասվար
01.03	Զրույց «Կանանց միջազգային տոն»		դասվար
15.03	Զրույց-քննարկում «Ով եմ ես: Իմ դերը կյանքում»		դասվար
22.03	Զրույց «Ընկերասիրություն և համերաշխություն» թեմայով (գրել շարադրություն)		դասվար
05.04	«Մայրության տոն » թեմայի քննարկում		դասվար
12.04	Զրույց «Սուրբ Զատիկ »		դասվար

19.04	Զբոսայգ «Ապրիլի 24»		դասվար
26.04	Զբոսայգ «Աշխատանքի տոն»		դասվար
03.05	Զբոսայգ «Հաղթանակի տոն»		դասվար
10.05	Բնության հրաշքները	Այգի	դասվար
17.05	Զբոսայգ-քննարկում «Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին»:		դասվար
24.05	Ամփոփիչ դաս:		դասվար աշակերտներ

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	1. Ծանոթություն 2. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում 3. Հոգեբանական, կարգապահական խնդիրների դիտարկում, քննարկում և լուծման տարբեր տարբերակների կիրառում:	դասղեկ հոգեբան	
Հոկտեմբեր	1. Երկամսյակի քննարկում		
Դեկտեմբեր	1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: 2. Հոգեբանական, կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբերակների քննարկում: 3. I կիսամյակի գնահատման ամփոփում, առաջադիմության հարցերի քննարկում, բացակայությունների ամփոփում: 4. արձակուրդային աշխատանքների քննարկում		
Հունվար-փետրվար	1. կազմակերպչական հարցերի քննարկում: 2. առաջադիմության հարցերի քննարկում, բացակայությունների ամփոփում: 4-րդ դասարանի գիտելիքների ստուգմանը նախապատրաստվելու հարցերի քննարկում		
Մայիս	1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում: 2. գնահատման տարեկան ամփոփում: Առաջադիմության հարցերի քննարկում 3. Ընթացիկ հարցեր		

